

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 8.3. Ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի նկատմամբ պահանջները

1. Սույն օրենքի 8.2-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի ղեկավար չի կարող լինել այն անձը, որը՝

- 1) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի չմարված կամ չվերացված դատվածություն.

2¹) ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.

2²) կամ որի հետ փոխկապակցված անձը անցյալում կատարել է այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի ղեկավար, չի կարող պատշաճ կերպով կառավարել ոչ հրապարակային ֆոնդի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

- 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված է ֆինանսական, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.

- 4) նախկինում, բայց ոչ շուտ, քան երեք տարի առաջ զրկվել է Կենտրոնական բանկի տրամադրած որակավորումից:

~~2. Ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի նշանակալից մասնակից չեն կարող լինել այն անձինք, որոնք բավարարում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության մերժման հիմքերից առնվազն մեկը: Անձը, որը նշանակալից մասնակցություն է ձեռք բերել ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում կամ ավելացրել է իր մասնակցությունն այնպես, որ ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նրա՝ ծայնի իրավունք տվող մասնակցությունը կազմում է առնվազն 20, 50 կամ 75 տոկոս, պարտավոր է այդ մասին տեղեկացնել Կենտրոնական բանկին նշանակալից մասնակցություն ձեռք բերելուց կամ մասնակցություն ավելացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով նախատեսված պահանջի խախտմամբ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում Կենտրոնական բանկը կարող է առաջարկել անձին (իսկ առաջարկությունը չկատարելու դեպքում՝~~

դատական կարգով պահանջել նրանից), որ նա ողջամիտ ժամկետում օտարի կամ այլ կերպ դադարեցնի իր մասնակցությունը ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կապիտալում:

2. Ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի նշանակալից մասնակից չեն կարող լինել այն անձինք, ովքեր բավարարում են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության մերժման հիմքերից առնվազն մեկը: Անձը, որը նշանակալից մասնակցություն է ձեռք բերել ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում կամ ավելացրել է իր մասնակցությունն այնպես, որ ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նրա՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունը կազմում է առնվազն 20, 50 կամ 75 տոկոս, պարտավոր է այդ մասին տեղեկացնել Կենտրոնական բանկին նշանակալից մասնակցություն ձեռք բերելուց կամ մասնակցությունն ավելացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով:

2¹. Եթե թույլտվության ստացման ընթացքում կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակալից մասնակցության ձեռքբերման մասին տեղեկացման ժամանակ Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաև եթե անձի՝ սույն օրենքով սահմանված կարգով ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուց հետո առաջանում է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ կամ 9-րդ կետերով նախատեսված նշանակալից մասնակցության նախնական համաձայնության մերժման հիմքերից որևէ մեկը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կապիտալում իր ունեցած ներդրումները, կամ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները կամ համապատասխան պահանջի իրավունքը չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով:

Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված՝ Կենտրոնական բանկի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած ժամկետին հաջորդող օրվանից ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

2². Եթե նշանակալից մասնակցություն ձեռքբերելուց հետո առաջանում է սույն օրենքի 8.3-րդ հոդվածի 2¹-րդ մասով կամ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3¹-ին կետով նախատեսված հիմքը, ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակցի նկատմամբ կիրառվում է «Փողերի վաճառման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաև անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաև ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակցի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Ներդրողների շահերի պաշտպանության նպատակով Կենտրոնական բանկը կարող է իր նորմատիվ իրավական ակտով սահմանել ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձանց կողմից հաճախորդների համար պարտադիր բացահայտման և տեղեկացման ենթակա նվազագույն տեղեկատվության ցանկն ու տեղեկացման կարգը:

4. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով ոչ հրապարակային ֆոնդերի կառավարումն իրականացնող անձանց նկատմամբ կարող է սահմանել սույն օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված տնտեսական նորմատիվներ, տնօրենների խորհրդի, ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման վերաբերյալ պահանջներ, որոնք չեն կարող առավել խիստ լինել, քան սույն օրենքով կառավարիչների նկատմամբ սահմանված պահանջները:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները կարող են տարբերակվել՝ կախված ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կողմից կառավարվող ֆոնդերի տեսակից կամ զուտ ակտիվների արժեքից:

6. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր նորմատիվ իրավական ակտերով ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձանց թույլատրելու լրացուցիչ գործունեության այնպիսի տեսակներ, որոնք սերտորեն առնչվում են ֆոնդի կառավարման գործունեությանը՝ անհրաժեշտության դեպքում դրանց իրականացման համար լրացուցիչ պահանջների սահմանմամբ:

7. Ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձանց արգելվում է իրականացնել ֆոնդերի կառավարմանը սերտորեն չառնչվող որևէ այլ գործունեություն:

(8.3-րդ հոդվածը լրաց. 22.01.25 ՀՕ-23-Ն)

(22.01.25 ՀՕ-23-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 62.	Կառավարչի	կանոնադրական	կապիտալում	նշանակալից
	մասնակցության ձեռքբերումը			

1. Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և դադարեցման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ համապատասխան նորմերը:

Հոդված 65.

Կառավարչի ղեկավարների և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ պահանջները

1. Կառավարչի ղեկավարներն են կառավարչի խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը կամ գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, ինչպես նաև տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

2. Կառավարչի ղեկավար չի կարող լինել, ~~կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն չի կարող իրականացնել, ինչպես նաև նման գործունեություն իրականացնելու առաջարկությամբ չի կարող հանդես գալ~~ այն անձը, որը՝

1) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) չունի սույն օրենքով սահմանված համապատասխան մասնագիտական որակավորում.

3) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի չմարված կամ չվերացված դատվածություն.

3') ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման գեների տարածման հետ կապված անձանց ցանկերում.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված է ֆինանսական, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.

5) ճանաչված է սնանկ կամ ունի ժամկետանց պարտավորություններ.

6) նախկինում, բայց ոչ շուտ, քան երեք տարի առաջ զրկվել է սույն օրենքով կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնագիտական որակավորումից.

7) կամ որի հետ փոխկապակցված անձն անցյալում կատարել է այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը ~~Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով~~ Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես կառավարչի ղեկավար ~~կամ կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձ~~, չի կարող պատշաճ կերպով կառավարել կառավարչի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել կառավարչի սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

3. Կառավարչի խորհրդի նախագահը կամ անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ կառավարչի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ կառավարչի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ, եթե կառավարիչներից մեկը մյուսի դուստր ընկերությունն է:

4. Կառավարչի գործադիր տնօրենը կամ գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները չեն կարող միևնույն կառավարչի մոտ զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ կառավարչի մոտ լինել ղեկավար (բացառությամբ դուստր կամ հիմնական ընկերության խորհրդի նախագահի և անդամի, ինչպես նաև սույն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի) կամ այլ աշխատակից: Կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը կամ անդամը կամ գործադիր տնօրենի տեղակալը կարող է իրականացնել միևնույն կառավարչի ֆոնդի կառավարման գործունեություն: Սույն մասում նշված անձինք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, վճարովի այլ աշխատանք կարող են կատարել միայն խորհրդի համաձայնությամբ: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կառավարչի ղեկավարների և (կամ) այլ աշխատակիցների համար կարող են նախատեսվել պաշտոնների համատեղելիության այլ սահմանափակումներ՝ ուղղված շահերի հնարավոր բխումների և այլ ռիսկերի կանխարգելմանը:

5. (մասն ուժը կորցրել է 22.01.25 ՀՕ-23-Ն)

6. Կառավարչի ղեկավարները և աշխատակիցներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր են գործել՝ ելնելով ֆոնդի մասնակիցների շահերից, իրենց իրավունքներն իրականացնել և ֆոնդի մասնակիցների նկատմամբ իրենց պարտականությունները կատարել բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով (ֆիդուցիար պարտականություն):

(65-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.06.14 ՀՕ-68-Ն, խմբ. 01.03.17 ՀՕ-72-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-219-Ն, 22.01.25 ՀՕ-23-Ն)

(22.01.25 ՀՕ-23-Ն օրենքն ունի անցումային դրույթ)